ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 51-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 11.10.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ խնդրանքով:

Սահմանադրական դատարանն իր՝ 23.10.2012թ. ՍԴԱՈ-73 աշխատակարգային որոշմամբ վերոհիշյալ դիմումով գործն ընդունել է քննության և գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել է ՀՀ Ազգային ժողովին:

Գործի դատաքննությունը նշանակվել է 2013թ. փետրվարի 26-ին:

Ելնելով գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման և դատաքննությանը փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Պահանջել ՀՀ արդարադատության նախարարությունից գրավոր հիմնավորումներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «... Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուն ժամ...», ինչպես նաև նույն օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «... ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց» դրույթների համաչափության ու հիմնավորվածության վերաբերյալ:

2. Գործով որպես փորձագետ ներգրավել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանին՝ առաջադրելով նրան դատարանին տրամադրել սույն որոշման 1-ին կետում հիշատակված դրույթների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն:

3. Այդ կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 23-ի ՍԴԱՈ-73 աշխատակարգային որոշումը և ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը, գործի դատաքննությունը հետաձգել և այն վերսկսել 2013 թվականի ապրիլի 23-ին, ժամը 10.00-ին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26 փետրվարի 2013 թվականի
ՍԴԱՈ-12